ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԷԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Հոկտեմբերի 5-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մեծ Բրիտանիայի տրանսպորտի նախարարության պատվիրակությանը՝ ավիացիայի և նավագնացության նախարար լորդ Վիկոնտ Գոշենի գլխավորությամբ:

Զրույցի ընթացքում պրն. Գոշենը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Հայաստան իրենց այցելության նպատակը՝ նշելով, որ այն հետապնդում է հայ-բրիտանական տնտեսական կապերի հետագա զարգացում և ընդլայնում: Լորդ Գոշենը պատմեց նաև Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և կառավարության այլ ներկայացուցիչների հետ ունեցած իրենց հանդիպումների մասին:

Զրույցի ընթացքում խոսվեց նաև Անգլիկան և Հայ եկեղեցիների առնչությունների և համագործակցության շուրջ, ընդգծվեց, որ երկու եկեղեցիների հարաբերությունները հետագայում պետք է ավելի ամրապնդվեն և ընդլայնվեն: Ապա Նորին Սրբությունը հյուրերին ծանոթացրեց Մայր Աթոռի ծավալած գործունեությանը՝ մասնավորապես քրիստոնեական դաստիարակության, հոգևորականների պատրաստության և քարոզչական ու կազմակերպչական կյանքի բնագավառներում:

Հանդիպմանը ներկա էր Հայաստանում Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Դեյվիդ Միլլերը:

ՄԱԿ-Ի ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 17-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՄԱԿ-ի Գաղթականների գծով Գերագույն Հանձնակատարի ներկայացուցիչներ Ռոբերտ Ռորինսոնին, Պիտեր Նիկոլաուսին, Ալեխանդրո Կոզելային և Միգրացիայի Միջազգային Կազմակերպության Կովկասյան Ռեգիոնի ներկայացուցիչ Ստեֆան Քուրին ու Հայաստանի Գրասենյակի Ղեկավար Մերի Շիհրնին:

Զրույցի ընթացքում հյուրերը Վեհափառ Հայրապետին ծանոթացրեցին իրենց կազմակերպությունների աշխատանքներին, մասնավորապես քննարկվեց հայ գաղթականների հարցը, որոնք զանազան պատճառներով լքել են իրենց բնակավայրերն ու հայրենիքը:

Նորին Սրբությունը նկատելով, որ փախստականների հարցը պահանջում է բավական լուրջ և նուրբ մոտեցում, նշեց, որ և՛ եկեղեցին, և՛ հիշյալ կազմակերպությունները, գործակցաբար, պետք է աշխատեն գտնել և ապա մշակել՝ գաղթականներին հայրենիք վերադարձնելու միասնական ուղիներ և ծրագրեր: Հատուկ ուշադրության պետք է արժանանա փախստականների համար նպաստավոր պայմաններ ապահովելու հարցը:

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՆՈՐԱՆԿԱԽ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 17-ի երեկոյան Նորին Սրբությունը Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընդունեց «Սահմանադրական վերահսկողությունը և ժողովրդավարական գործընթացները նորանկախ երկրներում» միջազգային սեմինարի մասնակիցներին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի ուղեկցությամբ:

Պրն. Հարությունյանը սեմինարի մասնակից հյուրերին, որոնք ներկայացնում էին Վենետիկյան հանձնախմբի յոթ անդամ երկրներ, ծանոթացրեց Վեհափառ Հայրապետին և պատմեց սեմինարի աշխատանքների մասին:

Նորին Սրբությունը, ողջունելով ներկաներին, նրանց խնդրանքով հանգամանորեն ներկայացրեց Մայր Աթոռի գործունեությունն ու կառուցվածքը:

Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը երախտագիտության և գնահատանքի խոսք ասաց սեմինարի մասնակիցներին՝ մեր նորանկախ պետության դատական գործընթացին և իշխանություններին ցույց տված աջակցության համար:

Հանդիպումից հետո հյուրերը, Վեհափառ Հայրապետի ուղեկցությամբ, շրջեցին Վեհարանի սրահներում և մեծ հետաքրքրությամբ ծանոթացան այնտեղ պահվող արժեքներին:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Նոյեմբերի 2-ին Նորին Սրբությունը Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընդունեց Հայաստանում պաշտոնական այցելությամբ գտնվող Ֆինլանդիայի արտգործնախարար տիկ. Թայրա Հալոնենին:

Տիկ. Հալոնենը Վեհափառ Հայրապետին մանրամասն տեղեկություններ տվեց պաշտոնական շրջանակներում իր ունեցած հանդիպումների մասին: Նախարարը նշեց, որ այդ հանդիպումների ընթացքում երկու երկրների համագործակցությանն առնչվող հարցերից բացի հանգամանորեն խոսվել է նաև Արցախյան հիմնախնդրի շուրջ:

Ապա Վեհափառ Հայրապետը հյուրի խնդրանքով պատմեց վերածաղկում և վերածնություն ապրող Հայ Եկեղեցու առաքելության, Հայաստանում քրիստոնեական դաստիարակության, նոր հոգևորականներ պատրաստելու, քրիստոնեության 1700-ամյակի տոնակատարության նախապատրաստական աշխատանքների մասին:

Զրույցի ընթացքում հատուկ ընդգծվեց երկու երկրների և ժողովուրդների համագործակցության և բարեկամության իրողությունը: Տիկ. Հալոնենը նշեց, որ Ֆինլանդիայի և Հայաստանի միջև համագործակցությունը խոստումնալից ապագա ունի, ըստ որում այն պետք է լինի շատ լայնածավալ՝ ընդգրկելով բոլոր բնագավառները: Նա պատրաստակամություն հայտնեց նաև՝ Մայր Աթոռին աջակցություն ցուցաբերելու գործում:

Հանդիպմանը ներկա էին Հայաստանում Ֆինլանդիայի դեսպան Անտի Կոյստինենը, ԵԱՀԿ Մինսկի կոնֆերանսի համանախագահ Հեյկի Տալվիտին, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Ռենե Նիբերգը:

ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Կիրակի, նոյեմբերի 3-ին, առավոտյան ժամը 10.00-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հունգարիայի արտաքին գործոց փոխնախարար Իշթվան Սենը Իվանին՝ ընկերակցությամբ Հայաստանում Հունգարիայի դեսպան Դյորդ Նանովսկու, Հունգարիայի հայ համայնքի վարչության նախագահ Ալեքս Ավանեսյանի և իր վեց աշխատակիցների:

Վեհարանում հյուրերին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Պրն. Իվանին Վեհափառ Հայրապետին տեղեկացրեց Հայաստան կատարած այցելության նպատակին՝ նշելով, որ պետական շրջանակներում ունեցած հանդիպումներից բացի, իր համար մեծ նշանակություն ունի նաև հայ ժողովրդի հոգևոր առաջնորդին այցելելը:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը նախ բարձր գնահատանքի խոսք ասաց Հունգարիայի պետության և նրա իշխանությունների հասցեին՝ Հայաստանին ցույց տված բարյացակամ և զորակցական վերաբերմունքի համար: Ապա խոսակցությունն ընթացավ հայ և հունգար ժողովուրդների դարավոր պատմական սերտ առնչությունների, Արցախյան հարցի ներկա իրավիճակի շուրջ: Նորին Սրբությունը շեշտեց այն իրողությունը, որ ամեն բանից վեր պետք է հարգվի Արցախի ժողովրդի կամքը և ապահովության երաշխիք տրվի նրա ապագայի համար: Հանգամանորեն խոսվեց նաև Հայաստանում եկեղեցու և պետության փոխհարաբերությունների մասին:

Զրույցի ավարտին հյուրերը հույս հայտնեցին, որ մոտ ապագայում Վեհափառ Հայրապետը այցելություն կտա Հունգարիայի Եկեղեցուն և տեղի հայ համայնքին:

Հանդիպումից հետո հյուրերը շրջեցին Վեհարանի թանգարանում և ներկա գտնվեցին Մայր տաճարում մատուցվող Ս. Պատարագին:

ԹԵՀՐԱՆԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՌԵԿՏՈՐՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 4-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Թեհրանի Ազատ և Երևանի Աճառյան Բուհ համալսարանների ռեկտորներ Ավագ Խաչատրյանին և Մուհանդես Շեհֆյարիզին:

Ջերմ զրույցի ընթացքում ռեկտորները Վեհափառ Հայրապետին տեղեկացրեցին, որ երկու համալսարանների միջև սկսվել է սերտ գործակցություն: Արդեն երկրորդ տարին է, ինչ Թեհրանի Ազատ համալսարում, ուր ուսանում են մոտ 400 հազար ուսանողներ, գործում է հայոց լեզվի և գրականության ամբիոնը: Այն ստեղծվել է Աճառյան համալսարանի և նրա ռեկտոր Ավագ Խաչատրյանի անմիջական ջանքերով: Իրանական ամբիոն պետք է բացվի Երևանի Աճառյան համալսարանում: Ի դեպ, այդ առիթով են Հայաստան ժամանել Ազատ համալսարանի ռեկտորը, պրոռեկտորը, օտար լեզուների ֆակուլտետի դեկանը և Հայոց լեզվի ու գրականության ամբիոնի վարիչը:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով կրթօջախների ղեկավարների նախաձեռնությունը, նշեց, որ նման ձեռնարկները մի նոր, կարևոր էջ են բացում հայ և պարսիկ ժողովուրդների դարավոր պատմության տարեգրության մեջ: Մեկ անգամ ևս ընդգծելով հարևան պետությունների միջև բարիդրացիական հարաբերությունների առկայությունը, Նորին Սրբությունը շեշտեց, որ կրոնների տարբերությունը չի կարող արգելք հանդիսանալ մեր երկու ժողովուրդների բարեկամական գործակցության համար:

Հանդիպման ավարտին փոխանակվեցին հուշանվերներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏՆ ՍՏԱՑԱՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերի 5-ին, իր պաշտոնավարման առաջին օրը, Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի հայրապետական օրհնությունն ստանալու նպատակով, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Արմեն Սարգսյանը:

Վեհափառ Հայրապետը, շնորհավորանքի և բարմաղթանքի ջերմ խոսքերով ողջունելով պրն. Սարգսյանին, վստահություն հայտնեց, որ նորընծա վարչապետը, ունենալով տնտեսագիտական, քաղաքական և դիվանագիտական բարձր գիտելիքներ ու փորձ, ամենայն պատասխանատվությամբ կշարունակի իր նախորդի՝ Հրանտ Բագրատյանի սկսած գործը: Նորին Սրբությունը հատուկ ընդգծեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը զորավիգ կլինի վարչապետի կողմից նախաձեռնվող հայրենաշեն բոլոր ձեռնարկներին:

Պրն. Սարգսյանը, շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը ջերմ ընդունելության համար, նշեց, որ իր համար հատուկ նշանակություն ունի իր աշխատանքային առաջին օրն սկսել Հայրապետի օրհնությամբ, լսել նրա բարի խոսքը և իր հերթին պրն. Սարգսյանը հավաստիացրեց, որ վարչապետի պաշտոնը

ստանձնել է հայրենիքի և հարազատ ժողովրդի առջև պարտքի բարձր զգացումով և իր համեստ ներդրումը պետք է բերի հայրենիքի բարգավաճման գործընթացին՝ ցուցարերելով ստեղծագործ մոտեցում և գործունեության առանցք և հիմք ունենալով մարդուն:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը, հաջողություններ մաղթելով պրն. Սարգսյանին նրա պաշտոնավարման ընթացքում, մեկ անգամ ևս շեշտեց, որ հայրենակերտման ազնիվ գործին պետք է լծվել միասնաբար՝ ժողովուրդ-պետություն-եկեղեցի գործակցությամբ:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Նոյեմբերի 9-ին, երեկոյան ժամը 18.30-ին, Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության Գյուղատնտեսության նախարար Իսա Քալանթարիին և նրա գլխավորած պատվիրակության անդամներին՝ Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարար Վլադիմիր Մովսիսյանի ուղեկցությամբ:

Զրույցի ընթացքում պրն. Քալանթարին Վեհափառ Հայրապետին տեղեկություններ տվեց Հայաստան իր այցելության վերաբերյալ և նշեց, որ պաշտոնական հանդիպումների ընթացքում կնքվել են 7 փոխշահավետ պայմանագրեր: Իրանի գյուղատնտեսության նախարարը ավելացրեց, որ նախատեսվում է հետագայում էլ ավելի ընդլայնել համագործակցությունը:

Վեհափառ Հայրապետը ուրախություն արտահայտեց, որ Իրանի և Հայաստանի սերտ գործակցությունը գնալով ավելի նոր ասպարեզներ է ընդգրկում: Նորին Սրբությունը, ողջունելով երկու նախարարների ժեռնարկները, նրանց հաջողություններ մաղթեց:

Հանդիպմանը ներկա էին Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Համիդ Ռեզա Նիֆար Էսֆահանին և Արմավիրի մարզպետ Սեդրակ Հովհաննիսյանը:

ՀԱԼԵՊԻ ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀՅՈՒՐ

Նոյեմբերի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Հալեպի հայ համալսարանականների միության անդամները: Երիտասարդ հյուրերը, որոնցից շատերը առաջին անգամ էին գտնվում հայրենիքում, Վեհափառ Հայրապետին պատմեցին իրենց տպավորությունների մասին:

Վեհափառ Հայրապետը, հայրական սիրով ողջունելով երիտասարդ հյուրերին, նրանց ներկայացրեց Մայր Աթոռի 1700 տարիների ծավալած գործունեությունը՝ ընդգծելով, որ չպետք է բավարարվել մեր հայրերի թողած ժառանգությամբ միայն, այլ մեզնք էլ մեր ունակությունների և կարողությունների չափով պետք է մասնակից լինենք հայրենաշինության գործին՝ վերարժևորելով և վերակենդանացնելով եղածը: Վեհափառ Հայրապետը պատմեց նաև Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի աշխատանքների մասին՝ կարևորելով հայ երիտասարդությանը մեր նկեղեցու, մեր պապերի ավանդույթներով կրթելու հանգամանքը:

Հյուրերը շնորհակալություն հայտնեցին Նորին Սրբությանը սրտալից ընդունելության համար և մեծ ակնածանքով ծանոթացան Վեհարանի սրահներում ցուցադրվող արժեքներին:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՆ ԱՅՑԵԼԵՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Նոյեմբերի 15-ին Գարեգին Ա Կաթողիկոսի օրհնությունն ստանալու նպատակով Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար Արմեն Սմբատյանը:

Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով պրն. Սմբատյանին՝ նախարարի պաշտոնն ստանձնելու կապակցությամբ, հետաքրքրվեց նախարարության ներկա դրությամբ՝ նշելով, որ Մայր Աթոռը իր գոյության ողջ ընթացքում եղել է հայ մշակույթի հովանավորը և այժմ էլ իր կարելին կանի նրա հետագա զարգացման, նախարարության առջև ծառացած խնդիրների լուծման ուղղությամբ:

Պրն. Սմբատյանը իր խոր երախտագիտությունն արտահայտեց Վեհափառ Հայրապետին ջերմ շնորհավորանքների և աջակցության համար՝ տեղեկացնելով,

որ նախարարության հետագա գործունեության համար մշակվում են հստակ ծրագրեր, որոնք շուտով կներկայացվեն նաև Նորին Սրբությանը: Պրն. նախարարը ուրախությամբ հայտնեց նաև, որ Կոմիտասի անվան խոնսերվատորիայում բացվել է հոգևոր երաժշտության ամբիոն, որը ղեկավարելու է Ներսես արք. Պոզապալյանը:

Հանդիպմանը ներկա էին Կրոնի գործերի խորհրդի նախագահ Լազար Սուքյանը և Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արք. Պոզապալյանը:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀՅՈՒՐ

Նոյեմբերի 21-ին Նորին Սրբությունը Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության և Բելոռուսի թատերական գործիչների միության նախագահներին և միության այլ աշխատակիցների, որոնք Հայաստան էին ժամանել «Թատերական աշուն 96» փառատոնին մասնակցելու նպատակով: Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Երվանդ Ղազանչյանը Վեհափառ Հայրապետին սիրով ներկայացնելով հյուրերին՝ Ռուսաստանի Դաշնության թատերական գործիչների միության նախագահ Կիրիլ Լավրովին, Բելոռուսի թատերական գործիչների միության նախագահ Ալեքսեյ Դուդարևին, երգչուհի Իրինա Մուսայելյանին, Շտուտգարդի թատրոնի տնօրեն պրն. Շչեկատյուկին, Ռուսաստանի Դաշնության թատերական գործիչների միության նախագահի տեղակալ Վալերի Շադրինին, տեղեկացրեց, որ Հայաստանի և Ռուսաստանի միությունների համատեղ ջանքերով բեմադրվել է «Ավե Մարիա» ներկայացումը, որը նվիրված է Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին: Պրն. Ղազանչյանը նշեց նաև, որ ծրագրվում է եկող տարի Երևանում համատեղ ուժերով կազմակերպել հայ թատրոնի 2050-ամյակին նվիրված հանդիսությունը:

Վեհափառ Հայրապետը, հայրական սիրով ողջունելով հյուրերին, գնահատանքի խոսք ասաց այդ գեղեցիկ ձեռնարկների առիթով և ընդգծեց, որ մեր օրերում, երբ հոգևորը տեղի է տալիս տեխնիկայի նվաճումներին, մշակույթը պետք է ձեռք բերի նոր հնչեղություն և նոր որակ: Նորին Սրբությունը նշեց նաև, որ նման գործակցությունները ու փոխադարձ շփումները իրենց բարի հետքն են թողնում ազգային մշակույթի վրա, ավելի հարստացնում այն:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Նոյեմբերի 25-ին Նորին Սրբությունը Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Հարավային Կորեայի դեսպան Ջոն Թին Լիին: Ողջունելով հյուրին՝ Վեհափառ Հայրապետը իր շնորհավորանքները ու բարեմաղթանքները հաղորդեց նրան՝ Հայաստանում դեսպանի պարտականությունները ստանձնելու կապակցությամբ:

Զրույցի ընթացքում պրն. Լին Նորին Սրբությանը ներկայացրեց Հարավային Կորեայի և Հայաստանի Հանրապետությունների գործակցության հեռանկարները:

Հանդիպմանը ներկա էին Հարավային Կորեայի դեսպանության և Հայաստանի Հանրապետության Արտաքին գործոց նախարարության աշխատակիցներ, լրագրողներ:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

Նույն օրը Գարեգին Ա Վեհափառ Հայրապետն ընդունեց նաև Հայաստանում Պորտուգալիայի Հանրապետության դեսպան Ժոզե Պաշեկու Լուիշ Գոմեշին:

Վեհափառ Հայրապետը շնորհավորեց պրն. Գոմեշին՝ Հայաստանում դեսպանի պարտականություններն ստանձնելու կապակցությամբ, և հույս հայտնեց, որ երկու հանրապետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների ստեղծումով համագործակցությունը կմտնի նոր փուլ և ոչ միայն տնտեսական ասպարեզում, այլև հոգևոր ու մշակութային:

Պրն. Գոմեշը, շնորհակալություն հայտնելով շնորհավորանքների համար, Վեհափառ Հայրապետին պատմեց պաշտոնական շրջանակներում իր ունեցած հանդիպումների մասին և հավաստիացրեց, որ երկու երկրների իշխանությունների և ժողովուրդների գործակցության և բարեկամության խոստումնալից սկիզբ է դրվել:

Պրն. Գոմեշին ուղեկցում էին Պորտուգալիայի դեսպանության աշխատակից Օլգա Ուսատենկոն և Հայաստանի Հանրապետության Արտաքին գործոց նախարարության ներկայացուցիչը: